Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
փետրվարի 24-ի N 386 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
դեկտեմբերի 19-ի N 2052 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց մասով առաջացած դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգը:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է շահութահարկ վճարող ջրօգտագործողների ընկերությունների նկատմամբ ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց հետ կնքված պայմանագրերից առաջացած պարտավորությունների վրա (այսուհետ՝ դեբիտորական պարտքեր):

3. Սույն կարգի կիրառման առումով դեբիտորական պարտքը ջրօգտագործողների ընկերություններին՝ ոռոգման ջրի մատակարարման դիմաց ֆիզիկական անձանց կողմից վճարման ենթակա պարտքի գումարն է:

4. Դեբիտորական պարտքը համարվում է կետանցված, եթե այն սույն կարգի 2-րդ կետում նշված պայմանագրերով սահմանված վճարման (մարման) ժամկետում չի վճարվել (մարվել): Այն դեպքում, երբ այդ պայամագրերով սահմանված չէ դեբիտորական պարտքի վճարման (մարման) ժամկետ, դեբիտորական պարտքի վճարման (մարման) ժամկետ է համարվում ոռոգման ջրի մատակարարման յուրաքանչյուր ամսվա համար՝ այդ ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը:

5. Սույն կարգի նպատակներով դեբիտորական պարտքերի անհուսալի ճանաչումը և դուրսգրումը չեն վերաբերում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում (հաշվապահական հաշվեկշռում) ճանաչման նպատակով դեբիտորական պարտքերի չափմանը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից (հաշվապահական հաշվեկշռից) դուրսգրմանը (ապաճանաչմանը) և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում) եկամուտ կամ ծախս ներառելուն (ճանաչելուն):

6. Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրումը չի համարվում դեբիտորական պարտքի ներում:

7. Այն դեպքում, երբ դեբիտորական պարտքերի գծով հաշվարկվել են տույժեր կամ տուգանքներ, ապա այդ դեբիտորական պարտքերն անհուսալի ճանաչելու և դուրս գրելու ժամանակ դրանց հետ մեկտեղ անհուսալի են ճանաչվում և դուրս են գրվում դրանց գծով հաշվարկված տույժերն ու տուգանքները:

II. ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ

8. Տվյալ հաշվետու տարվա վերջում (հաշվետու տարվա ավարտին) տվյալ հաշվետու տարում առաջացած և չմարված (չվճարված)՝ սույն կարգի 4-րդ կետում նշված կետանցված

դեբիտորական պարտքերը ճանաչվում են անհուսալի, եթե ջրօգտագործողների ընկերություն-ների կողմից մինչև հաշվետու տարվա ավարտը, բայց ոչ ուշ՝ մինչև դեկտեմբերի 1-ը, կետանց-ված դեբիտորական պարտքեր ունեցող ֆիզիկական անձանց ցուցակը փակցվել է համապա-տասխան գյուղապետարանի՝ հանրության համար տեսանելի տեղում, որի վերաբերյալ այդ գյուղապետի հետ համատեղ կազմված ակտի մեկ օրինակը գտնվում է ջրօգտագործողների ընկերություններում և առնվազն երկու անգամ՝ նոյեմբերի առաջին տասնօրյակում և դեկտեմբերի առաջին տասնօրյակում, կետանցված դեբիտորական պարտք ունեցող ֆիզիկական անձանց հանձնվել են գրավոր ծանուցագրեր, որոնց երկրորդ կեսը (կտրոնը) ֆիզիկական անձի կողմից՝ այն ստանալու վերաբերյալ նշմամբ և ստորագրությամբ գտնվում է ջրօգտագործողների ընկերություններում:

9. Սույն կարգի 8-րդ կետի համաձայն անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքերը դուրս են գրվում անհուսալի դառնալու հաշվետու տարում և դուրս գրված դեբիտորական պարտքերը հաշվի են առնվում որպես այլ նվազեցում՝ հաշվետու տարվա հարկվող շահույթը (վնասը) որոշելիս:

10. Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերը մարվելու դեպքում՝ մարված գումարների չափով ավելացվում է պարտքի մարման հաշվետու տարվա համախառն եկամուտը:

11. Դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի ներման կամ պահանջի իրավունքի զիջման կամ պարտքը չպահանջելու մասին ջրօգտագործողների ընկերություն-ների գրավոր որոշման և (կամ) կողմերի միջև դրա մասին գրավոր համաձայնության առկայության (փոխանցման, այդ թվում՝ անհատույց) դեպքում այդ դեբիտորական պարտքերը համարվում են մարված, և դրանց գծով դուրս գրված գումարների չափով ավելացվում է հաշվետու տարվա համախառն եկամուտը: Պարտքի ներում չեն համարվում պարտատիրոջ կողմից պարտքը պահանջելու համար չձեռնարկված գործողությունները,

մասնավորապես, դատարան չդիմելը, ծանուցագրեր չուղարկելը և պարտքի գանձման ուղղությամբ այլ գործողություններ չիրականացնելը:

12. Միևնույն ֆիզիկական անձի նկատմամբ առաջացած դեբիտորական պարտքերի մարման (մասնակի մարման) դեպքում մարվող (մասնակի մարվող) դեբիտորական պարտքի մասին տեղեկության բացակայության դեպքում մարված (մասնակի մարված) է համարվում ավելի վաղ ժամկետում առաջացած դեբիտորական պարտքը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ